# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ, 098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 51-Ա

### ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 14 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

Նարեկ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Նարեկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 14 նիստի օրակարգի հետևյալ հարցերը՝

1. /52-Ն/ Նարեկ համայնքի 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներ և դրույքաչափեր սահմանելու մասին: /Զեկ. Անիկ Հովհաննիսյան/
2. /53-Ա/ Նարեկ համայնքի 2021 թվականի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին: /Զեկ. Գ.Հակոբյան/
3. /54-Ն/ Նարեկ համայնքի 2021 թվականի բյուջեի նախնական քննարկում և հաստատում: /Զեկ. Գ.Հակոբյան/
4. /55-Ա/ 30 հունիսի 2006 թվականի թիվ 4 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: /Զեկ. Ա.Հովհաննիսյան/
5. /56-Ն/ Նարեկ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին: /Զեկ. Գ.Հակոբյան/:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ

ՍՄԲԱՏՅԱՆ ԶՈՐԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ, 098435745, narekhamaynq@mail.ru ,
narek.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 52-Ն

### ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ և 19-րդ ենթակետերով , <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ,10-րդ,11-րդ,12-րդ,13-րդ և 14 -րդ հոդվածներով

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Նարեկ համայնքում 2021 թվականի համար
ա/ տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1 հավելվածի,
բ/ տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թվականի հունվարի 1-ից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՍՄԲԱՏՅԱՆ ԶՈՐԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ**

Հավելված թիվ 1
Նարեկ համայնքի ավագանու
«16» դեկտեմբերի 2020թ.
Թիվ 52-Ն որոշման

# 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԴՐՈՒՅՔԱ ՉԱՓԵՐԸ |
|---|---|---|
| 1) | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար. | |
| ա. | ***հիմնական շենքերի և շինությունների համար՝*** | |
| | *մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար* | 7.5 հազար դրամ |
| բ. | *սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝* | |
| բա) | *200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝* | 15.0 հազար դրամ |
| բբ) | *500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝* | 25.0 հազար դրամ |
| բգ) | *1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝* | 25.0 հազար դրամ |
| բդ) | *3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝* | 50.0 հազար դրամ |
| գ. | ***ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝*** | |
| գա) | *մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝* | 1.5 հազար դրամ |
| գա) | *20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝* | 2.5 հազար դրամ |
| 2) | Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով | |
| ա) | *չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝* | 1.5 հազար դրամ |